Ամփոփ նյութ

«ՏԱՇԻՐ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՓԲԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 784)ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ **«ՏԱՇԻՐ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՓԲԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 784)** փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ

06/02/2019 թիվ 1/62 Ա

«ՏԱՇԻՐ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՓԲԸ (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 784) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումներ թույլ չտալու հանձնարարականով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ